ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կառավարական տուն 3

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 155

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արծվանիստի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ
(ծածկագիր՝ 3.1-5)

ա) իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է ՏԻՄ-ի և աշխատակազմի առջև դրված ֆինանսա-տնտեսագիտական վերլուծություն, տալիս է ընդունվող ֆինանսական փաստաթղթերի հիմնավորվածություն,
բ) կատարում է ՏԻՄ-ին ենթակա կազմակերպությունների գործունեության տեխնիկա-տնտեսագիտական փաստաթղթերի հավաքագրում, կազմում է ամփոփ հաշվետվություններ, տեղեկանքների և դրանք ներկայացնում է իր ղեկավարին,
գ) առաջարկություններ ներկայացնում համայնքային ենթակայության կազմակերպությունների պահպանություն, կատարվող ծախսերի, վճարների տնտեսական հիմնավորության, կամ տնտեսական անպատասխանատվության մասին,
դ) իր անձնական ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է այն հանձնարարարաությունների աշխատանքներին, որոնք ուսումնասիրում են տարերային կամ բնական աղետների ժամանակ համայնքին հասցված վնասները, հանձնաժողովի մյուս անդամների հետ հաշվարկում վնասի չափերը և կազմում ակտեր,
ե) կատարում է քարտուղարի հանձնարարարաությունները՝ ժամանակին և պատշաճ որակով,
զ) հետևում է քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է նրան,
է) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
Առաջատար մասնագետը ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ (և կրում է) իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ սահմանափակումներ):

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

-ունի առնվազն միջնակարգ կրթություն,
-ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
-տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության,
-ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2021 թվականի ապրիլի 23-ը ժամը 10:00:

Խնդրում ենք դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request էլեկտրոնային հասցեին: Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010 515132):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարության աշխատակազմ